

կամշատ ուտելիսելէն պիտի զգուշանայ . օգտակար են զովացուցիչ ըմպելիները , զոր օրինակ յստակ ջուր քանի մը պրգալ մէջը քացախ դնելով՝ որ շատ կը զովացընէ :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դ . ԽՐԵՇԵՆ ՀՐԲՈՒՅՏ ԴԱՅ :

|| ԵՐՋԱՊԻՍ ԵՐԿՐԱՊԱՄԻՍ անդադար փոփոխմանէն ետև հասաւ երկրիս վրայի հրէշներուն կորստեան օրը . ցամաք երկրիրը մէկ անգամ մ'ալ ցածցաւ , ու ստորերկրեայ կրակին հրելովը նորէն կամաց կամաց բարձրացաւ ջրէն վեր կարգ կարգ վրայէ վրայ շարուած հողերով , ու իրեն հետ դուրս բերաւ սատափը , բուստը , և տեսակ տեսակ գյոնզգոյն պողիպողները : || Հագին ձկնամողէզները || վկիանոսին անհուն աշեաց մէջէն քշուելով՝ նոր բացուած աւազաններուն մէջ խրուեցան ու սաստիկ տանջուելով սատկեցան . որոնց մորնչելու ձայները ալեաց ու փոթորկի ահաւոր ձայնին հետ կը խառնուէին . մատնաթենները որ ծառերու վրայ կը բնակէին , ջուրը բարձրանալու ատենը ծառերուն հետ միատեղ կորան : || Ն ատենները նորէն ածխային կազը օդէն բաժնուեցաւ , որով երրորդ անգամ մ'ալ օդը մաքրուեցաւ :

Լենդանեաց դարը լըմբնցաւ , և ուրիշ դար մը սկսաւ . ծովէն նոր դուրս ելած ցամաք երկրին վրայ՝ ուր որ առաջ ծովային բոյսերը ծաղկեր էին , նոր նոր բոյսեր առաջ եկան , կաղնին բողբոջ տուաւ , եղեինը կանանչ տերեներով զարդարուեցաւ , ճաներլու բոյսը գեղեցիկ տերևներուն հետ հոտաւէտ ծաղկըններով զարդարուեցաւ . ծիրանի վարդը , շուշանն ու փափուկ մանուշա-

կը իրենց քաղցր հոտը արձակեցին . կաղամախը , հացի ծառը , կիտրոնը , արմաւենին , գորոջ ու սանդալ և ափաժոռ ըսուածները բուսան և աչագին բարձրութեամբ ծառեր եղան . և աս ամէն բոյսերը զարմանալի կերպով մը երկրիս հասարակածէն սկսեալ մինչեւ բակեռները ամէն գօտեաց տակն ալ , որոնք ան ատենը հիմակուան արեադարձներուն գօտեացը պէս բարեխառն էին , հաւասար աստիճանով առաջ կուգային :

Լրկրիս այս խառնափնդորութեամբն և ծովուն այսպիսի այլայլութեամբը քանի որ ջուրերը կը պակսէին , երկրագնտիս ցամաքն ալ երթալով կ'ընդարձակուէր ու կը պնդանար : || Երբին ջերմութիւնը աստիճանաբար պաղելով , ջրերն ալ սկսան կամաց կամաց պաղիլ , և այս պատճառաւաւ ջրին մէջի աղային ու կաւային մասունքները տակը նստան , ուսկից առաջ եկան խաւ 'ի խաւոյ հողերը . աւազի , կապձի , կաւիձի և ածխային կրի վրայէ վրայ շարուած դիրտերը , որ սատկած հրէշներուն ոսկորները ծածկելով ատեն անցնելով քարդարձուցին :

|| Ճերը , դաշտերը ու անստանները բնակչով լեցուեցան : || Ն ատենն էր որ արծիւը իր մեծ թևերը ու զօրաւոր ձիրանները տարածեց օդուն մէջ , ինչպէս ուրիշ թռչուններն ալ սկսան օդուն մէջ թռչըտիլ : || Ն ատենն էր որ մեծամի հարաւային փիղը և ուրիշ մեծ ու պատճառաւոր կաթնտու կենդանիները թաց արօտներու մէջ կը պտըտէին , տեսակ տեսակ ոնդեղիւրներով անտառները լեցուեցան . ելասմոտ ըսուած կենդանին որ ձիու և փղի նմանութիւն ունի՝ կը խայտար ջրարբի մարգերու մէջ , նոյնպէս ձիագետինները ու թափիրները : || Կ ջրաբնակ կենդանիններէն զատ ուրիշ շատ տեսակ կենդանիններ ալ կային , ինչպէս || Եծածիրանը որ միջատներուն հետ սաստիկ կը կուուէր . բարձր ու տափակ ճակատով երկու տեսակ արծեր , գայլեր , մեծ բորենին՝ որուն միան քարացած ոսկորները կը գտնուին ,

1 Աւելէք :

2 Մէրձաւ :

3 Վերիններուն նման ծովային կենդանաբոյներ :

կատուի ազգը որ մարմնոյն ձեռվը ա-
ռիւծի ու յովազի կը նմանի՝ որոգայթ
կը լարէին անտառներու , դաշտերու և
ձորերու մէջ պըտըտող եղջերուներու ,
եղիկներու ու ձիերու երամակին :

Ո՞հակուտ բուսոց տեղ երկակուտ
բոյսերը յաջորդեցին , որոնց գործարան
քը աւելի կատարեալ են : ՞ նջուած սո
զուններուն տեղը տաք արիւն ունեցող
կենդանիները յաջորդեցին , որոնց մեծ
թոքը թթուածին կազով կը մնանի .
() դը մինչև որ չնչելի եղաւ՝ որչափ փո-
փոխութիւններ կրեց , որչափ անգամ
պէտք էր զտուիլ մետաղներու , ջրի ,
աղի և ածխոյ գոլորշիններէն՝ որ կենաց
անյարմար կ'ընէին զայն : Այս դադար-
ծութեան կարգերը շուտով առաջ գնա-
ցին անկէ վերջը . արարչութեան վե-
ցերորդ օրուան ու դարուն մէջ թռչուն-
ները ու ընտանի կենդանիները բոլոր
իրենց զանազան տեսակներով ստեղ-
ծուեցան : Են ատենը Այստուծոյ մէկ
ձայնով մեծամեծ կէտերով լեցուեցաւ
ծովը , վիթխարի պալենան , վիշապ
ձուկը , փոկը և դլիինները ալիքները
պատուտելով կը լողային :

Այսկրիս ջերմութիւնը դէպ 'ի խո-
րերը մնալով զրափ տաքութիւնը կը
նուազէր . բեկոնները սառնամանն էօք
ծածկուեցան , օդին բարեխառնութիւ-
նը նուազելով կենդանեաց կազմուած-
քին վրայ ալ ազդեցութիւն ըրաւ : Հին
փղերուն՝ որոնց մորթն ու կմախը բեկ-
ուային սառներուն տակը մինչև հիմա
կը գտնուի , ան ատեն կարծրացաւ . ո-
րով հիւսիսային ցուրտ օդերուն կը դի-
մանար :

Այս ընդարձակ , գեղեցիկ ու ամենայն
վայելութեամբ զարդարուած երկրիս
մէկ տէր մը կը մնար . Այստուծոյ կեն-
դանացուցիչ չնչովը այն ալ ստեղծուե-
ցաւ . Այսամ առաջին մարդը ու իր կի-
նը Աւաստեղծուեցան՝ խելքով ուժով
և երիտասարդական չնորհքով զար-
դարուած : Ոճապէտ դրսուանց տկար
ստեղծուած մը կ'երևնային , բայց ի-
րենց ձակտին վրայ կը փայլէր տիրա-
կան նշան մը տպաւորեալ Այստուծոյ

ձեռքովը , և անմահական հոգւոյ մը
ձառագայթ :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի՞ոդհանուր տեղէիութիւն չկանց վըայ :

Չկանց կազմուածքէն կ'իմացուի
թէ ջրոյ մէջ կենալու համար եղած
են . բոլորին ալ գլուխը ու պոչն բա-
րակ , մէջ տեղն հաստ , որպէս զի դիւ-
րաւ ուզածնուն պէս ջրին մէջ շար-
ժին . աս յայտնի է որ մարդիկ նաւուն
ձեր ասոնցմէ օրինակ աւեր են : Ձըկ-
ներուն շարժմունքը ուրիշ ամէն կեն-
դանիներէն տարբեր է . ոտք չունին ,
բայց անոր տեղ դիւրաշարժ փուլեր ու-
նին որ ուզած ատեննին կը բանան կը
գոցէն և ասանկով ուր որ ըլլայ կ'եր-
թան : Ենկըծին քովի թերեն ու կոնը-
կին վրայինները հաւասարակշիռ կը պա-
հեն զիրենք ու շարժմունքնին կը շուտ-
ցընեն . իսկ պոչին մօտ եղածներն վեր
վար ելլելու ու իջնելու համար է . ան
ձկանց որ թերեն շատ է՝ շուտ չեն կըր-
նար քալել . շանաձկան թերերը հասա-
րակ ձկանց թերերէն ալ քիչ է , բայց
ամենէն շուտ քալողներէն մէկն է :

Ձկներն ունին մէկ սոսնձային նիւթ-
մը որով մարմիննին պատած է թացու-
թենէ պահելու համար . աս սոսնձին
տակն են փուլերն . փուլերուն տակն
ալ իւղային նիւթ մը կայ զիրենք տաք
պահելու համար : Ձկներու թոքը՝ ա-
կանջնին է , ու չնչառութիւննին կաթն
տու կենդանեաց չնչառութեան շատ
նման է կ'ըսեն . բայց թէ ինչպէս կը
չնչեն՝ յայտնի չէ , միայն այսչափ գիտենք
որ ձկներն բերաննին օդով կը լեցընեն
ու ականջնուն քով փամփուշտ մը կայ
հօն կը պահեն , և պէտք եղածին շափի
կը գործածեն . և ան ձկներն որ օդեր-
նին չեն փոխեր , շուտով կը մեռնին :
Լան մէկ երկու տեսակ ձկներ ու գրե-
թէ բոլոր խեցինները որ փամփուշտ չու-
նենալով միշտ ջրոյն տակը կը կենան .